ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«____ » _____2025 թ. N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 102-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 5.1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 102-Ն հրամանի հավելվածի (այսուհետ՝ Հավելված)՝

1) 9-րդ աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

N	Շենքերի և շինությունների (կառույցների) նպատակային նշանակությունը	k2 գ արժ
1.	6 և ավել հարկ ունեցող առողջապահական կազմակերպությունների շենքեր և շինություններ	1.5
2.	200 և ավելի այցելուների համար՝ կայարաններ, թատրոններ, կինոթատրոններ, օդանավակայանների շենքեր, ծածկած մարզադաշտեր, առևտրի կենտրոններ:	1.35
3.	Հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ, քոլեջներ, ուսումնարաններ, նախադպրոցական կազմակերպություններ, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններ, հոսպիսներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, մինչև 5 հարկ ունեցող հիվանդանոցներ, եկեղեցական կառույցներ:	1.30
4.	Էներգաջրագազամատակարարման համակարգերի, հեռախոսային և էլեկրոնային կապի, հրշեջ ծառայության և ոստիկանության համակարգերի, բանկերի, պետական և համայնքային նշանակության վարչական շենքեր և կառույցներ:	1.20
5.	Շենքեր և շինություններ (կառույցներ), որոնց վնասվածության աստիճանը չի զուգակցվում մարդկանց մահվան ու արժեքավոր սարքավորումների փչացման հետ, չի հանգեցնում կազմակերպության անընդհատ գործող տեխնոլոգիական գործընթացների դադարեցմանը կամ շրջակա միջավայրի աղտոտմանը: Այս դեպքում թույլատրելի շեղվածքի սահմանափակման պայմանը հաշվի չի առնվում:	0÷0. պաս համ
6.	1-5-րդ կետերում չհիշատակված շենքեր և շինություններ (կառույցներ):	1.0

»,

2) 82-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

3) 158-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«158. Շրջանակակապային և կապային տարրերով անպարզունակ համակարգերով շենքերում կապային տարրերը պետք է լինեն յուրաքանչյուր ուղղությամբ երկուսից ոչ պակաս, տեղակայված տարբեր հարթություններում և հատակագծում լինեն հարկի կոշտության կենտրոնի նկատմամբ

հնարավորության սահմաններում համաչափ: Տասը և ավելի հարկայնությամբ շենքերում երկու գլխավոր ուղղություններով պետք է լինի 4մ-ից և հարկի բարձրությունից ոչ պակաս երկարությամբ առնվազն երկու խուլ դիաֆրագմա՝ յուրաքանչյուր ուղղությամբ, խուլ կարող է համարվել մեկ բացվածք ունեցող դիաֆրագման, եթե բացվածքի մակերեսը չի գերազանցում դիաֆրագմայի ընդահնուր մակերեսի 20%-ը: »։

2. Հավելվածը լրացնել նոր՝ 29.1-ին բաժնով՝ հետևալ բովանդակությամբ.

« 29.1. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ) ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

120.1. Առողջապահական կազմակերպությունների շենքերը, շինությունները (կառուցվածքները) պետք է ունենան առնվազն մեկ ստորգետնյա հարկ, վերգետնյա հարկերի թիվը չպետք է գերազանցի 9, իսկ վերգետնյա բարձրությունը՝ 33մ:

120.2. Նախադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների շենքի և շինությունների վերգետնյան հարկերի թիվը չպետք է գերազանցի 4-ը, իսկ դպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների շենքերի ու շինությունների վերգետնյան հարկերի թիվը չպետք է գերազանցի 5-ը:

120.3. Առողջապահական, հանրակրթական նշանակության կազմակերպությունների շենքերի, շինությունների կոնստրուկտիվ համակարգը պետք է լինի շրջանակակապային:

120.4. Արտաքին պատերն պետք է լինեն շրջանակակապային համակարգի կրող տարրեր, որոնցում բացվածքները կարող են իրականացվել առանց սահմանափակումների:

120.5. Առողջապահական, հանրակրթական նշանակության կազմակերպությունների շենքերի, շինությունների առանցքային թռիչքները չպետք է գերազանցեն 6,5 մ:

120.6. Ինժեներական սպասարկման բոլոր ցանցերը պետք է ապահովված լինեն հակասեյսմիկ միջոցառումներով և իրականացվեն համաձայն՝ սույն շինարարական նորմերի 29-րդ գլխի:

120.7. Առողջապահական, հանրակրթական նշանակության շենքերում և շինություններում թույլատրվում է կիրառել սեյսմապաշտպանության հատուկ համակարգեր սույն շինարարական նորմերի 205-րդ և 206-րդ կետերին համապատասխան։»։

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից։